

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2005թ. մարտի 23-ից ապրիլի 2-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա.Գյուլբենկյանը, երկրորդ կարգի մասնագետ Ա.Բադալյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա.Առուշանյանը մասնակցել են ք.Վաշինգտոնում կայացած «Համաշխարհային Բանկի կողմից մշակված աղքատության գնահատման նոր մեթոդաբանության ուսումնասիրումը և կիրառումը Հայաստանում» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2005թ. ապրիլի 5-8-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ.Գևորգյանը մասնակցել է ք.Ստրասբուրգում կայացած Եվրոպայի բնակչության կոմիտեի նիստին և «Սոցիալական կապակցման ժողովրդագրական խնդիրները» խորագրով կոնֆերանսին: